

Պ Ա Յ Մ Ա Ն Բ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՆՄԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 60 Տօլ.

Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԿԻԿ

ԾԱՆՈՒՅՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ի Ա Վ Ի Լ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Կ Ա Վ Ա Կ Ա Կ Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԱՌԻ ԱՄԵՆ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

rev. Père G. Kalemkarian
tengasco № 4

Հ Ա Ս Յ Է

Redaction du Journal

«Гравунк»

(Belgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Иразунк»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
ստորագր.

Հ Ր Ա Ւ Ե Ր



Դպրոցասիրացի Գործադիր Ժողովոյ անդամոց եւ Ընդհանուր Ժողովոյ անդամներն ընտրութիւնները պիտի կատարուին վաղը առաւօտ յետ աւարտման ժամերգութեան, ազգային վարժարանին մէջ:

Ընկերութեան կանոնագրի հրդ յօդուածին համաձայն, քուէարկելու իրաւունք պիտի ունենան միայն ա նոնք որոնք 21 տարին լրացուցած են եւ անդամակցութեան մուտքի տուրքը կը վճարեն նոյն օրը Ժողովի բացումէն առաջ:

Կը հրաւիրուին բոլոր կրթասէր եւ տոհմասէր ազգայինները վաղը գալ ան- գամակցիլ ընկերութեան եւ մասնակ- ցիլ ընտրութեան:

Առժամ. Դիւան Ընդհ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Յ. ԳՈՒՐԴԵԹԵԱՆ Ս. ԳԱՆԱՐԵԱՆ

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ



Զէյթունի կաթողիկոսական փոխանորդը տեղեկագրած էր թէ քաղաքին եւ շրջակայի հայ Հոռ- մէականներէն 97 անձեր նաեւ Հաճի-Տէտէ գիւղի ազգայինները Մայրենի եկեղեցւոյ գիրկը վե- րադարձան: Արդէն կը յիշենք թէ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակներէն միայն կազմուած Զէյթունի եւ շրջակայի հայ ազգաբնակչութենէն մաս մը հարստահարութեանց պատճառաւ վերջին տարիներու մէջ չքաւոր ընկած ըլլալով, կաթողիկ կամ Լատին կրօնաւորներէ հացագին ձեռք բերելու համար դաւանա- փոխ եղած էր: Հաւատաւոր ը- նելու գնով աշքատին ոլորմու- թիւն տուող այդ պապական Բեռերը հայ ազգի ուսին բարոյ յապէս բեռեր եղած են, ոչ թէ հայրեր կամ նպաստամտոյց- ներ: Ֆրանսան շատ իրաւամբ ինքզինքը այդ մըլտած ու հո- տած բեռերէն ազատելու համար զանոնք վաւտեց իր սահմաննե- րէն գուրս: Բայց անոնք Արե-ւելք եկան ուսում տարածելու կեղծ դիմակին տակ:

Զէյթունցիներէն մաս մը որ- չափ որ առաջին առթիւ այդ- պապական սինլքորներուն լա- րած թակարդը իյնալու միամ- տութենը ցոյց տուաւ, վերջա- պէս այսօր իր Մայրենի եկեղե- ցիին գիրկը վերադառնալով, ե- կաւ հաստատել թէ այդ մար- դօրսներու քթին խնդացած էր կեղծ ոլորմածութեան դէմ դա-ւանափոխութիւն կեղծելով, Զէյ- թունցիներու առաջին քայլը որ- չափ տխրաւիժ՝ անոնց այժմու կեցուածքը նոյնչափ բերկաւիժ է: Անոնք ասով դաս մը տուած եղան հոռած մտքերու այն բո-ւրական դիտարկումն, բարոյական ապտակ մը անոնց չամչցող դէմ- քին, որպէս զի հասկնան թէ ամ-բողջ քաղաքային շրջաններու առ- ջեւ պատուած իրենց դիմակը Ասիոյ խորքերը ապրող հայ շի- նական իսկ խաբելու անկարող է այլեւս, եւ սահմանուած է որ, ինչ- պէս Հաճի Տէտէ գիւղէն այսօր կաթողիկ քեռերը ամօթապարտ ետ դարձան, օր մը հայ ծագում ունեցող բոլոր շրջանակներէ դուրս վաւտուին Յիսուսի անունը շահագործող ամէն դիմակաւոր խաչագողներ:

Դաւանափանութեան մենք այնչափ կարեւորութիւն չը պիտի տայինք, եթէ միայն առողջ դա- տողութիւնը եւ համոզումը գեր խաղացած ըլլար անոր մէջ. նաեւ մեղ համար մեծ նշանակութիւն չպիտի ունենար հայու մը այս կամ այն եկեղեցիին դառնալը եթէ կրօնքի չպարին տակ ծած-կուած օտար մարդօրսները ի-րենց ենթականերուն ազգային եւ հայրենասիրական զգացումնե-րը խաթարել չը ճգնէին: Ո՛հ, չեմ կարող առանց զգուանքի չը յիշել հոս, իբր նմոյշ, երկու Պոլ-սեցի հայուհիներու սա պփգալի յայտարարութիւնը:

Մենք հայ չեմք. կարողիկ եմք. կատեքստիկ հայերը, երեսնին մայիլ անգամ չեմք ուղեր երէ կարելի ըլլայ: Կը սիրենք Յոյները եւ Ֆր-րանսացիները:

Ահա այս տեսակ ճաղիկներ կը կը հասցնեն կաթողիկ քեռերու

մեր հռոմէական ազգայիններուն մէջ յաճախումը եւ անոնց վար- ժարանները:

Հարկ է որ մեր Միութարեան հայրերը քիչ մը աւելի հոգ տա- նին իրենց դաւանակից ազգա- յինները այս ողբալի դահալի- ժումէն փրկելու համար:

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՄԻ

Տամատ Մահմուտ փաշայի մեծ որդին, իշխան Սապահէտտին, որ արտասահման ելլելէն ի վեր իր հայրենասիրական բուն եւ աւան-դով աւ գործունէութեամբ Երի-տասարդ թուրքերու մէջ էն հա-մակրելի դէմքը եղած է եւ որ ժամանակէ մը ի վեր թուրքիոյ կառավարութիւնը ապակեդրո-նացեալ—սահմանադրական վար-չութեան մը վերածելու սկզբուն-քով կուսակցութիւն մը կազմա-կերպած է, ներկայ տարւոյ փե-տըրուար ամսոյ մէջ եւրոպական մեծ պետութեանց յիշատակագիր մը զրկեց իր ստորագրութեամբ ի դիմաց այդ կուսակցութեան: «Թալմիշ» արտատպեց այդ յիշա-տակագիրը եւ ուրիշ եւրոպական թերթեր անկէ քալուածներ ը-րին ու համակրական եւ ոմանք քննադատական յօդուածներ նը-ուիրեցին:

Այժմ իշխան Սապահէտտինի կուսակցութեան «Թէրաֆըր» ա-նունը օւկանը այդ յիշատակագիրը թուրքերէն թարգմանելով իր վերջին թիւին մէջ հրատարա-կած է: մենք ալ օգտակար կը նկատենք անոր կարեւոր մասերը թարգմանաբար ծանօթացնել մեր ընթերցողներուն, գաղափար մը կազմել տալու համար թէ ազա-տամիտ սեպուած թուրք կու-սակցութիւն մը ինչպէս կը դա-տէ ու կը մտածէ:

Ա.

«Թէ ինչու համար բարենորոգումն- ները չի գործադրուեցան»:

— Դահակալութեանը դեռ աւաջին օրերուն Սուլթան Ապտիւլ-Համիտ Բ. իր հօրը Սուլթան Մէհմետ չինածները քանգել սկսաւ: Ապտիւլ Մէհմետ 1852ին

մեծ Րէշիտ փաշային պատրաստած կիւլիանէի բարենորոգումը եթէ ըն-դունեց ու հրատարակութեան տուաւ, այդ կը պարտիք այն ատենուան ա-րեւմտեան նոր մտքերով տոգորուող եւ քաղաքակրթութիւնը ճանչցող ու ա-նոր օգտակարութիւնը գնահատող մէկ քանի պետական բարձր անձնաւորու-թեանց: Սակայն նոր օրինադրութիւն- ները մահմետական եւ քրիստոնեայ բնակչութեան անամոռութեան առջեւ անուժ մնացին: Մահմետականներու զօգոնութիւնը առաջ կուգար բարենո-րոգումները ըմբռնելու չափ մտային պատրաստութիւն չունենալէն. քրիս-տոնեաներն ալ կը վախնային որ այդ բարենորոգումներուն հաւասարութիւն խոստումը իրենց նախկին առանձնա-չնորոգումները կը քննէ:

Քրիստոնեայ Եւրոպայի մէջ ազգաց քաղաքական եւ կրօնական կառավա-րութիւնները իրարմէ բաժնելու եւ իրաւունքներու հաւասարութիւն ձեռք բերելու համար ամէն ջանք ի գործ դրուած ատեն, օսմանեան կայսրու-թեան մէջ բնակող քրիստոնեաները ի-րենց վերաբերած եկեղեցիներուն ա-ռանձնաչնորոգումները պաշտպանելով ի-րաւանց հաւասարութեան ղէմ կը մա-քառէին: (*) Այս ընդգիծութիւնը ար-գելք եղաւ որ Մէհմետին սկսած բարե-նորոգումը իր յաջորդին գահակալու-թեան տեւողութեան միջոցին ալ չի գործադրուի: սակայն այդ երկու վե-հապաններուն ջանքերը այն ատեն ա-պարդիւն մնալով հանգեցան, հանրային կրթութիւնը կատարեալ եղանակաւ բարեկարգուած ըլլալուն չնորհիւ՝ ար-դի ժամանակի պէտքերուն բաւարար եւ հանրութեան միտքը ղէպի այն կող-մը մղելու կարող սերունդ պատրաս-տելու մասին իրապէս օգտակար եղան:

1852ին կառավարութեան յառաջի-մասէր ձեռնարկներուն Ժողովրդեան տգիտութիւնը արգելք կը ըլլար կոր: 1876ին երկրի Ժողովրդեան միտքը այն աստիճան փոխուեց էր որ թուրքերը Ապտիւլ-Ազիզը՝ բարենորոգմանց մե-ծագոյն թշնամի Մէհմետին նկատի փա-շայի հետ միանալուն պատճառաւ գա-հնկէց ըրին եւ այժմու Սուլթանէն Սահմանադրութեան օրինագիրք մը ձեռք բերին: Քրիստոնեաներուն ժամանակաւ տրուած առանձնաչնոր-հումները պահպանելով միատեղ, հայ-րենիքի բոլոր զաւակներուն հաւասա-րութիւնը ընդլայնող այս սահմանա-դրութիւնը ցաւալի է որ Երի-տասարդ գոհացուցիչ չի նկատուեցաւ: Նոյնիսկ այսօր Մակեդոնիոյ մէջ օս-մանեան կառավարութեան գործադրու-

(*) Ինչ, կուզէ՞ք որ մեր եկեղեցի- ներուն ալ Շէյխիւլ-Իսլամը իրաւունք

Թեանց դէպ ազմուկներ բարձրացնող Պուլկարները այն ատեն ընդ Պալ- քանի իշխանապետութեանց հետ ունե- ցան պատերազմը կը կը պատրաս- տէին: Բ. Դուռը իր յաւ մտադրու- թիւնը անուրաշխօրէն հաստատող ապացոյց մը տուած ատեն (*), արտա- քուստ Թուրքիոյ քրիստոնէից պաշտ- պանութեան նպատակաւ 1876ին հրա- տաւակուած ուսակոն պատերազմը Արեւելքի յառաջդիմութեան քսան եւ հինգ տարիէ աւելի ետ մնալուն պատ- ճառ եղաւ:

Երկրորդի կառավարութիւնը երկրին պիտոյորական քայքայումէն օգտուելով սահմանադրական վարչութիւնը լու- ծեց եւ զայն հիմնող կուսակցութիւնը հետեւեց: Կուսակցութեան պետը Միտհատ փաշան ոչնչացուց: Թուրք ազգին էն ընտիր անհատներէն կազ- մուած ազաական կուսակցութիւնը ցրուելով անդամները տառապանքի են- թարկուեցան: Հայոց ընդհանուր կո- տորածը՝ անա թուրքերով սկսած այս մարդկային զոհարելութիւնը անոր քա- ղաքական թագադրութիւնը եղաւ:

Այս զոհարող պատերազմը, եթէ չըլ- լար եւ սահմանադրական վարչութիւնը չը լուծուէր, անկասկած ազատասէր- ները չէին հալածուեր, հայկական կո- տորածները չէին պատահեր, Մակե- ղոնիտն մարդկային սպանդանոցի մը լիճակին չէր մատնուեր: Անգամ մը Թիւրքիան քաղաքականութեան ճամ- բուն մէջ դրուելէ յետոյ, Արեւելքի եւ արեւմուտքի միջեւ կապերը կաւել- նան, ընդհանուր խաղաղութեան ա- պահովութեան ամենակարեւոր միջոց մը կը կազուէ: Թաւալի է որ այսօր Պողազիչիի եզերքներուն վրայ ոչնչա- ցումի ենթակայ այս խեղճ վարչու- թիւնը իր մարդկութեան եւ օսման- ցութեան թշնամի քաղաքականու- թեանը մէջ Եւրոպայի դիւանագիտու- թեան կողմէ անշուշտ ակամայ ըլ- լալու է կրկնակի քաջալերութեան կարծանանայ:

Սակայն մեծ պետութեանց յայտնի համաձայնութիւնը մեծաւ մասամբ խոր դժգոհութիւններն չէ կարող սքո- ղել. մեծ եւ փոքր պետութեանց մի-

(*) Օսմ. սահմանադրութեան հրա- տարակուիլը կակնարկէ, բայց Պալքար պուլկարական կոտորածը՝ որ պատճառ եղաւ ունեւթական պատերազմին, բնաւ միտք չը բերեր:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

68

ԱՌԱՋԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՃԻՐԸ

(Շար. նախորդ թիւէն)

Շէվքի անդրդուելի մնաց իր կամ- քին հանդէպ ու գլուխը շարժելով գոչեց. — Բոլոր տղա խօսքերդ ապարդիւն պիտի ըլլան քեզ ձեռքէս ազատելու: Դիտեցա՞մ եղբի՛ր որ բանտէս ետքը տու- նիս մէջ կախաղանն ալ ունիմ. մինչեւ այնտեղ անգամ պիտի քաշկռտուիս: Ըսէ՛, ի՞նչ գաղափար է որ կառաջնորդ- ղէ՞քք:

— Արդարութիւնը... միմիջեց Աւա- ղականպետը: Ան է իմ ճամբաս, իմ գա-

ջեւ տիրող մրցումները ընդհանուր անդորրութեան յարաբերութեանը ձեռ- տող համաձայնութեան ամեն խորհուրդ անհետեւա՞ք կը թողուն:

Ներկան ալ անցեալը մոռցնել տո-ւ ող ուղղութիւն մը ցոյց չը տար. ընդհակառակը, օրեր անցնելով Արեւել- քան խնդրոյ չարաքաղ հորիզոնը ընդ- հանուր պատերազմ մը բորբոքող նոր տարրեր կը պատեն կոր, որովհետեւ արեւելեան խնդիրը տակաւին տեղեր- նին պարպելու պարտաւոր վարձակալ- ներու կողմէ իրենց տիրապետութեան տակ կարծուած երկրի մը սեմին վրայ կը գրուի զորոյ Այս եղանակաւ խնդ- րոյն լուծումը անկարելի է:

Ներկայ պայմաններու մէջ, այլա- ղան շահերու իրար՝ բաղխութիւն՝ Է- մրցակից եղող տարրերէն իւրաքանչ- իւրին սա ճոխ պատառէն գոնէ բաժի- նի թիկնածու ըլլալն ինքստ բնական է:

Սակայն թուրքերուն ամէն տեսակ զօրութեանց եւ արգելքներու հան- դէպ յարատեւ հաւաքական զարգացու- մը կապացուցանէ թէ անոնք կար- ծուածին պէս իրենց հայրենիքին վար- ձակալները չեն, այլ օրինաւոր սեփա- կանաւորներ ըլլալով, խնդիրը ամենա- հիմնական եղանակով մը պիտի լուծէ:

Ասիկա բացատրել պիտի ջանանք:

(Շարունակելի)

ՆԱՆՈՆԱԳԻՐ ՎԱՌՆԱՅԻ ԴՊՐՈՅԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐ:

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

16. — Գործ. Ժողովոյ իւրաքանչիւր անգամ առանձնապէս եւ բոլորը հա-ւաքաբար պատասխանատու են Ընդհ. Ժողովոյ առջեւ իրենց գործառնու- թեան համար:

17. — Ընկերութիւնը կունենայ իր պաշտօնաթուղթը ու կնիքը:

18. — Ընկերութեան պաշտօնական գրութիւնները պիտի կրեն ատենապե- տին եւ ատենադպրին ստորագրութիւն- ները եւ ընկերութեան կնիքը:

19. — Գործ. Ժողովը պիտի ունենայ իր ներքին կանոնադրը վաւերացեալ Ընդհ. Ժողովէն:

զափարս ու նպատակս: Ան է կառաջ- նորդէ զիս: Եւ այն հաւատքն ունիմ թէ՛ Արդարութեան ձայնին հետեւող մը բնաւ թշուառ չըլլար:

— Դուն խաբեւային մէկն ես... գո- չեց Շէվքի փաշան՝ իր նստած տեղէն վեր ելնելով:

Աւաղականպետը սարսուռաց ու իր մէջ զգաց անզուսպ պոռթկացում մը զոր ջանաց խղճել:

— Դիտեցա՞մ եղբի՛ր որ մօրուքդ բռնած եմ ու ազատելիք չունիս. յարեց Շէվ- քի փաշայ: Եթէ մարմնոյդ կաշին ան- գամ քերթել պէտք ըլլայ՝ քու գոյու- թիւնդ երեւան բերելու համար, դարձ- եալ յանձն առած եմ: Միայն թէ՛ քե- ղի կը թողում խոստովանելու ճշմար- տութիւնը: Հոգիս կը վկայէ որ դուն ծպտեալ մէկն ես ու այս սեմերէն ներս գազոնի դաւադրութիւն մը կը սարքես...:

— Ասիկա բարձեալն Աստուծոյ գիտ- նալիք բանն է, ընդհատեց Աւաղակա- պետը ծանր ու սաստող ձայնով մը. դուք մահկանացու մըն էք եւ չէք կըր- նար ապագայի խորը թափանցել. ըսե-

20. — Գործ. Ժողովոյ մեծամասնու- թիւնը հրաժարելու պարագային Ընդհ. Ժողով կը գումարուի նոր ընտրութեան համար: Իսկ երբ փոքրամասնութիւնը կը հաժարի, Ընդհ. Ժողովոյ Դիւանը մնացողներուն ընկեր կուտայ անոնցմէ անփշապէս ետքը առաւելագոյն քուէ չահողները:

ԴՐԱՄԻ ԴՈՐԾԱՄՈՒԹԻՒՆ

21. — Գործ. Ժողովը ընկերութեանս գրամական հասցիին 40 0/0ը պիտի յատկացնէ կալուածներու շինութեան, 30ը գէթ պուլկարական ցնդի համա- պատասխան վարժապետներ պատրաս- տելու եւ 30ը երկսեռ վարժարանի ընթացիկ ծախքին գործածելու:

22. — Գործ. Ժողովը հոգաբարձու- թեան հետ համախորհուրդ ջանադիր պիտի ըլլայ վարժարանի յառաջդի- մութեան եւ վրանգումայն ուսուցիչ- ներու ընտրութեան, իսկ անհամաձայ- նութեան պարագային միայն թեւա- դրիչ հոգաբարձութեան: Գործ. Ժողովը հոգաբարձութեան չգոյութեան պարա- գային կը վարէ վարժարանի գործերը առժամապէս:

23. — Դիւանը առնուազն վեց օր առաջ պէտք է իմացնէ անդամներուն Ընդհ. Ժողովոյ գումարման օրն ու վայրը եւ օրակարգը: Հաւաքիչը պար- տաւոր է տետրակին մէջ իւրաքանչիւր անգամ իր անունը ստորագրել տալ:

23. — Ընկերութեանս շանդամկ- ցող ազգայինք կրնան Ընդհ. Ժողովոյ ներկայ լինիլ, բայց ձայն չունին հոն:

25. — Ընդհ. Ժողովոյ դիւանին ան- դամ մը միեւնոյն ժամանակ Գործ. Ժո- ղովոյ անգամ չի կրնար ըլլալ:

26. — Ներկայ կանոնադրը կրնա՞ թարեփոխել Ընդհ. Ժողովը ներկայից երկու երրորդի ձայնովը առանց սա- կայն հիմնական նպատակէն չեղելու:

27. — Գործ. Ժողովը միշտ հետա- մուտ պիտի ըլլայ յարմար հայ ժիմա- զիսթներ գտնելով անոնց ամէն կարգի դիւրութիւն ընծայելու, պայմանաւ որ չըջանաւարտ ըլլալէն յետոյ Ազգ. վար- ժարանին ծառայեն:

28. — Նոյն Գործ. Ժողովը հոգ պի- տի տանի քանի մը գումարահաշիւային ընդունակ աշակերտներ զրկելու հայ- կական բարձրագոյն վարժարաններ ապագայ վարժապետներ պատրաստելու համար:

29. — Գործ. Ժողովը պարտաւոր է նաեւ տեղական թերթերու միջոցաւ

լով թէ՛ «հոգիս ասանկ կը վկայէ»: Շատ արտակարգ յայտնութիւն մը կուզէք ընել ֆաքթի մը, որ ծերու- թեան տարիներու բեռին տակ կըած դէպի գերեզման ուղղած է իր քայ- լերը: Չէի սպասեր որ ձեզի նման բարձ- րաստիճան վէզիւր մը հաճոյք զգար ա-ւուր հացի կարօտ ֆաքթի մը տանջե- լու: Կրնեմ. ես արդէն տանջանք մըն եմ ինքիս մէջ...:

Շէվքի փաշա գալարուած իժի մը շարժումովը քայլ մը յառաջացաւ ու ապտակ մը զարկաւ Աւաղականպետին: Օ՛հ, այդ լեռներու մեծ մարդը փո- խանակ զայրանալու, հեգնակոն ժպի- տով մը ըսաւ:

— Հապա՞ աջ երեսիս... — Կր ծաղրեմ... բացաքանջեց հրա- մանատարը:

— Ամենեւին... կրնեմ թէ՛ հաճոյ- քիդ համար անգամ մըն ալ աջ երե- սիս զարկ:

— Ի՞նչ զարմանալի արարած ես դուն... չուտով դուրս ելի՛ր... աչքերս թող չը տեսնեն քեզ:

Ու թիկնապահին յանձնելով զինքն

հրաւիրել հայ հասարակութիւնը, ծա- նուցանելով ժողովին օրակարգը:

30. — Գործ. Ժողովոյ գանձապետին քով կը մնայ առ առաւելն 200 ֆր. աւելի գումարները պէտք է Ժողովը հաւաքաբար յանձնէ յարմար եւ ա- պահով տեղ մը իրենց պատասխանա- տուութեան տակ:

31. — Կալուածի յատկանալի դրամը կը մնայ ընկերութեան տրամադրու- թեան տակ մինչեւ կալուածի մը զը- նումը կամ չինութիւնը:

32. — Ընկերութեան կազմալուծ- ուած պահուէն անոր բոլոր ունեցած- ները, դրամ, գոյք եւն կը պատկանին Վառնայի Ս. Սարգիս եկեղեցւոյն:

Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՄԱՂԸ

Սրտի անհուն ցաւօք կար- դացինք Կ. Պոլսոյ հայ թերթե- րուն մէջ թէ բաղմարդիւն ու- սուցչապետ Ռէթէոս Պէրպէրեան յանկարծամտ՝ եղած է կիրակի օր իր տան մէջ:

Հանգուցեալը 57 տարեկան էր. իբր թարգմանիչ եւ հեղինակ աղ- գին գրական ծառայութիւններ մատուցած ըլլալէ զատ ինք մի- ակ դէմքը եղած է ամբողջ սե- րունդ մը դաստիարակելու գոր- ծին մէջ. ասկէ 31 տարի առաջ իր հիմնած «Պէրպէրեան» վար- ժարանը հարիւրաւոր ընթացա-ւարտներ տուած է աղգին. Պէր- պէրեանի սաները քիչ բացա- ութեամբ պատուաբեր դերքեր գրաւած են այլ եւ այլ ասպարէզ- ներու մէջ. իր սկզբունքը եղած է ճշմարիտը, բարին եւ գեղեցիկը պաշտել, եւ այս սկզբունքին վը- րայ դաստիարակած է իր աշա- կերտները:

Յուզարկաւորութիւնը շատ չը- գեղ կատարուած է: Պոլսաբնակ հայութիւնը համախմբուած է ա- նոր դադաղին շուրջը. խիստ բազ- մաթիւ պսակներ զրկուած են: Օրմանեան պատրիարքը իր շուր- ջը ունենալով հինգ եպիսկոպոս-

աւ եպիսկոպոս. — Տար այս ֆաքթը... թող սեմե- րուս քովէն անգամ չանցնի: Թիկնապահը հրամանը կատարեց: Ընազականպետը հետեւեալ ապա- րանքէն ու քայլերն ուղղեց գէպի Հայկականքը:

Երբ իր պաշտելի աղջկան բնակա- րանը մտաւ, սիրտը թրթռացումով լեցուած մօտեցաւ Լուսիային ու զըր- կաց մէջ առնելով զանի համբուրեց:

— Ա՛խ, նայէ՛, այս գիշերը դարձ- եալ չեկար, միմիջեց Լուսիա գորովա- լից ձայնով մը: Դիտեցայի՛ր, հայր ի՛մ, ինչ դառն երազ մը տեսայ: Արթննա- լէս իվեր արցունք թափած եմ...:

— Ի՞նչ երազ էր որ քեզի արցունք թափել տուաւ. ընդհատեց Աւաղակա- պետը Պատմէ ինծի՛: Գարին ըլլաւ:

Լուսիա խորունկ հառաջանք մը քաշելով իր հոգիէն ըսաւ:

— Այս գիշերը դուն ծայրայեղ թըշ- ուտութեան մը մէջ կը գտնուէիր, հայր իմ: Հազուադէպ պատահա- տառ եղած, երեսներդ արիւնով շա- ղախուած, ձեռքերդ ու ոտքերդ վիրա-

ներ և շատ մը վարդապետներ ու քահանաներ նախագահած է յուզարկաւորութեան և դամբանականը խօսած:

Միւթարական է սա պարագան թէ Պէրպէրեանի մահէն յետոյ իր օգտաշատ վարժարանը պիտի յարատեւէ. որովհետեւ Պատրիարքը յանուն ազգին հրապարակաւ խոստացաւ ստանձնել Պէրպէրեան վարժարանին բարոյական և կրթական խնամքը, նաեւ անոր որոշացեալ զաւակներուն պաշտպանութիւնը:

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

ԴԱՎՐԷԺ, 16 Մարտ

Պարսիկները յաջողեցան թղթաւ տան Պէլքիզացի պաշտօնատարները պաշտօնէ ձգել տալ: Այս նպատակաւ ամիսներէ ի վեր գործողներն միշտ թէնարանի յեղափոխականներու հետ յարաբերութեան մէջ էին ու հրահանգ կրտսնային. վերջապէս հասան նպատակնուն. ելեւմտական նախարարութեան ղեկավար Նաուրի եւ մաքսատներու ընդհանուր կառավարիչ Բրիմ պաշտօնէ հանուեցան:

Մարտ 14ին Դավրէթի մաքսատան բոլոր պարսիկ ծառայողները գործադուլ րրին եւ զինուորները ու միւս պաշտօնեաները մաքսատնէն դուրս առնելով զոնները կնքեցին, եւ իրենց կողմէ պահակներ զրին: Անոնք յաջորդ օրը բոստ մատն Սէյիտ-Համզա մզկիթի մէջ եւ թուրքիկներ ցրուել տուին քաղաքի դանազան մասերուն մէջ, որոնցմով Պէլքիզացի պաշտօնեաներուն կը սպառնային: Անոնք յետոյ հետագորաւ թէնարանի սահմանադրական խորհրդարանին գիմեցին:

Մաքսատան փակման երրորդ օրը մաքսապետին նախարարութենէն հեռագիր եկաւ որ բարեկամաբար հրաւիրէ խռովարար պաշտօնեաները գործի, իսկ եթէ չզան արտաքսէ պաշտօնէ: Քանի մը օր ընդդիմանալէ յետոյ խռովայող պաշտօնեաները տեսնելով իրենց պարտութիւնը եւ ազգային խորհրդարանի անտարբերութիւնը սկսան գործի, ցնոր կարգադրութիւն:

Լորուած, մազերդ թափթփած ու բովանդակ կերպարանքդ մեռելի գոյնը պատեր էին, նեղ քարերով չըջապատուած ու խոնաւ նկուղի մը մէջ նետուած էիր, որոյն խաւարը մահաբոյր ու գարշելի էր: Լուռ ու անարտօն շարտայայտութիւն մը կար քու թշուուած դէմքիդ վրայ ու փոխանակ ցաւելու, կարծես թէ կը ժպտէիր: Ու տեսայ որ լոյս մը ցոլաց քու նկուղիդ մէջ... բարի ոգի մը, որ ծերունի մարդուն մը կը նմանէր, քովդ եկաւ ու միւթարեց քեզ: Դու չես անոր ալ ժպտեցար ու վիճակէդ բնաւ չը գանգատեցար... միայն թէ՛ երբ աչքդ իմ թափած արցունքներու դարձուցիր, այլեւս չը կրցար զիմանալ... մեքենաբար գրկիս մէջ նետուեցար ու ըսիր. «Ի՛նչ լար, Լուսիս, մի լար իմ սիրելի ազգիկս: Աստուած կը տեսնէ ամեն բան...»: Այս խօսքիդ վրայ, յանկարծ քունէս արթնցայ ու անկողնիդ մէջ քեզ փնտռեցի, հայր իմ:

Աւազակապետը ժպտեցաւ ու խանգառատանքով մը կուրծքին վրայ սեղմեց իր պաշտելի աղջիկը. յետոյ մեկ-

Մէմէտ-Ալի Շահը հեռագրաւ մը Ատրպատականի րնգհ. կուսակալին հրամայած էր, այստեղ գտնուած արքայական տան զէնքերը հակերով թէնարան զրկել փութով: Կուսակալը հրամանը ճշդիւ գործադրեց. քառասուն գրաստներ զէնքերով ընդունած գիշերը ճամբայ ելան ծածուկ: Բայց առաւօտուն զադանիքը իմացուեցաւ տեղւոյս սահմանադրական խորհրդարանին մէջ, սա իր գործակալներու միջոցաւ զէնքերը ետ դարձուց. այսինքն Շահին սեփական ապրանքը յանուն ազգին գրաւուեցաւ:

Այս լուրը ամբողջ քաղաքին մէջ տարածուեցաւ:

Յաջորդ օրը ռուս հիւպատոսը զեկուզագիր մը զրկեց կուսակալին սա իմաստով. «Այսօր ես իմ մարդերէս իմացայ թէ Շահի անձնակաւ սեփականութիւնը եղող իրեղէնները քանի մը անյայտ անձներու ձեռքով ճամբան դրաւուեր եւ Դավրէթ բերուեր են. այդ չարամիտ մարդոց այս տգեղ ընթացքը անպատեհ կը մնայ: Այս կերպ արտասովոր յանգցում իւր կատարուելէ յետոյ քաղաքիս մէջ, այլեւս յառաջիկային այլ օրինակ չատ անկարգութիւններ կրնան տեղի ունենալ: հետեւապէս քաղաքս անապահով վիճակի մէջ կը գտնուի եւ կրնայ տեղւոյս ռուսահպատակ ժողովուրդը մեծապէս վնասուի: Ինչ չատ փափաքել է իմանալ թէ Դավրէթ քաղաքի եւ նահանգին կառավարչական ղեկը որու վերապահուած է եւ ապագային եթէ ոեւէ վտանգ պատահի ո՞վ պատասխանատու պիտի ըլլայ»:

Կուսակալը այս զեկուցագիրը կարգաւորով, զրկեց տեղւոյս սահմանադր. խորհրդարանին. անդամները երկար բարակ խորհրդակցելէ յետոյ որոշեց րակացութեան մը չեկան, ուստի զմեքին թէնարանի խորհրդարանին, որմէ տակաւին պատասխան չեն ստացած:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼԸ

Ամերիկայի մէջ «Իրաւունք»ի գործակալութիւնը ստանձնած է Տիար Մ. Գ. Սուգիլեան որուն միջոցաւ ևս կարելի է բաժանորդագրուիլ:

Հասցէն՝

Մ. Գ. ՍՈՒԳԻԼԵԱՆ

18 Տիքս Բլաւ Պոսթօն մէս

նեցաւ տունէն: Բայց քաղաքին պարսպին մօտ չը հասած ոստիկան մը մօտեցաւ իրեն ու հրամայեց.

— Ոստիկանապետը կուզէ քեզ:

— Զի՞ս... հարցուց Աւազակապետը:

— Քեզ, հապա ո՞վ... գտնեց լղրճուկ

ոստիկանը բարկացած եղանակաւ մը:

— Աղէկ, բարեկամս, ի՞նչու կը նեղանաս: Երթանք... ո՞ւր է ոստիկանապետը:

— Սո՛ւտ... քալէ... չեչտեց ոստիկանը:

Աւազակապետը հետեւեցաւ այդ հրէշատիպ թուրքին ու ոստիկանապետին քով գնաց:

Ոստիկանապետը քառասունի մօտ տարիք մը ունէր: Անոր կերպարանքը ցոյց կուտար իր հոգեւոյ բովանդակ սեւութիւնը:

Երբ Աւազակապետին վրայ նայեցաւ, ձեռքը սեւ ու խիտ մօրուքին տարաւ ու հարցուց.

— Ի՞նչ է անունդ:

— Ի՞մա, մրմնջեց Աւազակապետը:

— Այո, քուզի:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Ս. Յակոբայ Ազգ. Որբանոցին իրաւունք ելեր է. որբանոցը պիտի կառուցուի Գարակէօղեան կտակի գումարով: Շատ միմասական է Օրմանեանի «սրտագին բարեմաղթութիւններ» ընելը «կայսեր արեւշատութեան համոր անոր այո շնորհին (?) առթիւ», նաեւ Արիս էֆէնտին հետը առած պալատ երթալով «յանուն ազգին երախտագիտական և հաւատարմական զգացումներ մատուցանելը յոտս կայս. Գահոյից, կայս. այս բարեհաճ «իրատէին» շնորհման առթիւ»: Իբր թէ թագաւորը իր քսակէն կառուցանէր այդ որբանոցը: Շուրջըրթելուն ալ մէկ չափը կայ:

— Հանգուցեալ: Ա. Իօանէսքուն իր հարստութենէն 130,000 ֆր. յատկացուցած է իր հեղինակութիւնը եղող բաւարանի մը հրատարակութեանը համար: Այդ բաւարանը հայերէն լեզուին ուրիշ լեզուներու հետ ունեցած նմանութիւնները ցոյց կուտայ: Հանգուցեալը 8—9 տարի առաջ Վառնայի մէջ ժամանակ մը մնաց հայերէն արմատ և դաւառական բառեր կը հաւաքէր և այդ նպատակաւ բաւական դրամ կը ծախէր գրագիրներ աշխատակիցներ վարձելով:

— Տիգրիսի հայ քահանաները դեռ կը յուզին այրի քահանաներու ամուսնութեան խնդրը: Մշակի մէջ այս մասին կը կարդանք թէ խումբ մը քահանաներ ամսոյս 3ին հաւաքուելով, որոշած են պահանջել Առաջնորդէն որ չուտով ընդհանուր քահանայից ժողով հրաւիրէ այրի քահանաներու ամուսնութեան հարցի վերաբերմամբ ժողովին նախագահը քահանաները իրենք պիտի ընտրեն, որպէս զի Առաջ-

նորդը իբրեւ նախագահ ճնշում չի բանեցնէ: Սոսյ Կաթողիկոսը և Երուսաղէմի ու Պոլսոյ Պատրիարքարանները այրի քահանայից վերամուսնութեան հակառակեցան. անդին Հայաստանի մէջ երկու այրի քահանաներ զիրար պսակեցին և Կրօն. Ժողովին որոշմամբ կարգաւոյժ եղան տեսնենք Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը ինչ գիւրք պիտի բըռնէ:

— Տեղւոյս Աղքատախնամը իր նպաստներուն մէջ ժլատ գտնուելու տարաձայնութեանց վերայ դացինք անձամբ տեղեկացանք թէ այդ ընկերութիւնը վերջին երկու ամիսներուն մէջ 1400 ֆր. նպաստ տուած է աղքատներու և հիւանդներու: Հետեւապէս գանգատները անտեղի են. իսկ եթէ գանգատողները կրնան ապացուցանել թէ աղքատ չեղողներու ինպատու անհարկի մտուցներ եղած են, թող հաճին քանի մը օրինակ ցոյց տալ. այն պարագային մենք ալ իրենց հետ պիտի բողոքենք:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » (433 էջ) 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ. կամ ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱԿՈՆ ԵՐԿՐՈՐԳ անդամ տպագրուած և ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁՈՔՆԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար գիմեց ՎԱՌՆԱ «Ի ր աւ ու յ ք» ի խմբագրութեան



կապետը:


— Բուն անունդ ըսէ:

— Տէր Աստուած, ուսկի՞ց գտնեմ բուն անունս: Ես ճշմարտութիւնը խոստովանեցայ ու դուք չը հաւատացիք ինձ, ալ ի՞նչ ընեմ:

— Ամենեւին. դու չես աստ, գուցէ այս երկրին մէջ տարբեր նպատակով մը կը չըջիս: Գուցէ վաղեմի չարագործին սէկն ես, որ ինքզինքդ ծածկելու համար այդ ցնցոտիները վրադ առած ես: Բայց ատիկա չը պարտկեր քեզ... պէտք է մերկանաս կաշիդ անգամ, եթէ չես ուզեր ոսկորդ ալ վերայ տալ: Կը հասկնաս... ասկից ետքը տէրվիչներու խաբէութիւնը չը կլկեր ոստիկանութիւնը:

Աւազակապետը լուռ մնաց այն անգամ ու արհամարհական նայուածք մը նետեց մարդու մը վրայ, որ իր աչքին խլէզ մը չէր արժեք:

(Շարունակելի)



— Յաքիբ է:

— Յաքիբ անուն չըլլար... բուն անունդ ի՞նչ է:

— Ատիկա չեմ գիտեր... երբ աչքս բացած եմ աշխարհքիս մէջ ու խելքս բանի մը հասնիլ սկսած, անունս ատ էր. հօրմէս ատ լսեցի:

— Այսքան ֆաբրիկներ տեսած եմ ո՞րն անոնցմէ առանց անուն ունենալու չըլլած է աշխարհքիս մէջ: Պարապ տեղ կը յոգնեցունես զիս. անա ատ է քու միտքդ, եթէ ոչ խոստովանիլդ բան մը չէ:

— Եթէ անպատճառ անուն մը կուզէք ունենալ, նկատել տուաւ Աւազակապետը հեգնական բացատրութեամբ մը, ատիկա գիւրբին է. գուք ըսէք ինձի, ես ալ այդ անունը կը կրեմ:

— Անիծած... տես, ինչե՛ր կըսէ, պոռաց դժոխատեալ թուրքը: Միթէ՞ կը լսոնաս ուր գտնուիլդ: Նայէ, հոս պաշտօնատուն մըն է, պէտք է ըսածներդ խելաւ եւ ծաղրական չըլլան:

— Հապա ի՞նչ կուզէք որ ըսեմ... աս չէ՛, ան չէ՛... ընդհատեց Աւազա-

ԱՊՕՆԵԼԵՐԻՄԻՉԷ

Էլան կազմեթա պէտէլինի էօտէմէմիշ օլան վէ քէօյլէրտէ եաշաեան ապօնէլէրիմիզէ րէնա իտէրիզ քի՝ եա պօրճլարընը տօղը ըուտան պիզէ եօլլաւընլար վէ եախօտ Ջատիկ միւնասիպէթի իւլէ շէհիւրէրէ էնմէլէրինտէ պիզիմ աթիտէքի գործակալլարըմըզա թէէտիյէ իթսինլէր:

- | | |
|-----------------------------------|-----------|
| Պ. Արիս Գուրպէթեան | Ռուսոյն |
| » Ն. Սրսակեան | Տօյրիշ |
| » Արթաքի Սարգիսեան | Սիլիստրէ |
| » Օննիկ Օննեան | Պալլըզ |
| » Յովհաննէս Քէօսէեան | Շուսլա |
| » Արտաշէս Հարէց | Պուրկազ |
| » Գրիգոր Թիւթիւնճեան | Ֆիլիպի |
| » Յ. Պիպէեան | Պուրիշ |
| » Սիսակ Մէլիքեան | Քիօսթիմնէ |
| » Մ. Սուգիկեան | Պօսթօն |
| » Կարապետ Ջրասունեան | Գաւիթի |
| Ս. Շաքարեան Օթ. Սամսոն Ալեխանճարի | |

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻՄԻԱ

Մաքէթոնիանըն իւշ վիլայէթլէրի տախիլինտէ, «Տնէֆիկ» տէ իշար օլընտըզը իւզրէ, միւսլիման էհալիսի պէյնինտէ քէ Էհէմմիյէթիլի եէնի պիւր հարէքէթ հըսս օլընիյօր եանի միւսլիմանլար տախիլ խրիսթիան գօմիթէլէրի կիպի թէշքիլաթա պաշաւընլար Նակէհան հուսուլա կէլէն պու եէնի թէշքիլաթըն մագսէտի շու ըմըշ քի՝ տէվլէթլէրին թէրթիպ իթմէքտէ օլտըզը իսլահաթտա իսլամլարըն հուգուգ վէ սէրպէսթիլիկինէ խաւէլ կէլմէսին:

— Սիրքէճի սթասիօնընտան Մակէթոնիայա վէ էտիրնէ վիլայէթինէ մուհիմմաթը հարպիյէ նազլը պիւր գաշ կիւնտէն պէրու թաթիլ օլմուշ տըր:

— Կիրիտ մէսէլէսի իշիւն Թաւն կազէթասը տէյօր քի՝ Կիրիտին եունանիստան իլէ պիրլէշմէսինէ իթալիա տէօլլէթի գարշը տէյիլ տիր, վէ եագընտա պու մաալտա տօսթանէ միւրաճաաթտա պուլըննաճագ տըր:

— Սէրասքէր Րիզա բաշանըն թէքիլիքի վէ վիւքէլա մէճիլիսինի գարարը իւզրէ, խըտմէթի ասքէրիլէնին 3 սէնէ պաշրագ ալթընտա թէմտիտինի Սուլթան իրատէ իթտի Պու թէտպիրլէ սիլահ ալթընտա պուլընան առքէրլէրին մըգտտըր խալլը արթաճագ տըր:

— Ալթը պէօյիւք տէվլէթլէրին էլիլիլէրի ապրիլ 9տա Ալըմանիա սէֆարէթխանէսինէ պիլի ճթիմա 100տէ 3 կէօմրիկըզամմը գապուլ իթտիլէր իսէտէ, սօն տագիգատա կէօմրիկ մուամէլէքէրինտէ զուհուր իտէն միւշքիլաթ սէպէպի իլէ գարար իմզաւանմաւը, վէ Աւստրիա էլիլիսի

գըսա պիր միւտտէթ իշիւն մուֆարէքէթ իտէճէկինի արզ էլլէտի:

— Հօլանտա էլիլիսի կէնտի հիւքիմէթի թարաֆընտան պիր տալէթնամէ Պապը Ալիյէ թագտիմ իլէ Թիւրքիայը Լա-Հէյ գօնֆէրանսընա տալէթ իթտի:

— Կէօմրիկ զամմը իշիւն ուֆագ տէվլէթլէր տախիլ պէօյիւքլէրին գարարընա միւթապըզ գալտըլար իսէտէ, Մ. Ամիրիկա էլան իթիրազընտա տէվլամ իտուպ, էրմէնիստանտա Ամիրիկա մէքթէպլէրին մէսէլէսի հալլ օլընմաւտըգնա կէօմրիկ զամմընը գապուլ իթմէլէքէկինէ ըսրար իտէյօր:

— Եէնի Պասրա վալիսի Հասան բաշա քէնտի միւտէպպիրլիկի սայէսինտէ՝ մէզքիւր էլայէթտէ գարըշքըլըզ թէսքին իտէպիլմիշ տէյօրլար:

— Սըբպ էլիլիսի Սուլթանըն հուգուրընա գապուլ օլընտըզ էսնտէ՝ Ատրիաթիգ սահիլինտէն պիր շըմէնտըֆէր խաթթը ուզատուպ՝ Սէրպիա շըմէնտըֆէրի իլէ պիրլէշտիւրմէսի հէր իքի տէօլլէթէ ֆաիտէլի օլաճաղընը արզ իթտի Ֆրանսըզ ժէնէրալը Լօգըզ բաշա պու բլանը թէտըզգ իթմիշ իտի:

ՏԱԽԻԼԻԷ

Ֆէխամ Բրէնս Ֆէտինանտ հազրէթլէրի միսաֆիրլէրի Մէքլէնպուրկ-Շըվէրին տիւքիւ վէ տիւշէսի իլէ պէրապէր Սօֆիատան Բլէֆիայա կիթմիշ օլուպ, օրատան թըրնօվայա տախիլ ուզրալուպ էսկի էսէրլէրի թէմաշա իթտիքտէն սօնրա՝ պու կիւն եարըն շէհրիմէզէ թէշքիլի իտէճէքլէր տիր:

— Րումանիա գրալընըն տօղտուղու կիւնիւ օլմագ միւնասէպաթը իլէ Ֆէխամ Բրէնս Ֆէրտինանտ պա թէլէկրաֆ անը թէպիրիգ իթտի Գրալ տախիլ մուհիպպանէ սուրէթտէ ճէվապէն պէյանը թէշէքիւրաթ էլլէտի:

— Միւթէվէֆա վիւքէլա րէյիսի Բէթքօլըն վէֆաթընըն գըրգը իշիւն էվլէլէրի կիւն Սօֆիա գապրիստանընտա հոգեհանգիստ աշըր իճրա օլունտու միւթէվէֆանըն աշիլէսի իլէ պիւթիւն վիւքէլա վէ իւմէրա հազըր պուլընտըլար:

— Պուլկարիանըն կիւլ մահսուլընը Միլան սէրկիսինտէ թէֆթիշ իտէն Մ. Տ. Բէհհիքըվ աշըր խըտմէթի Լօնտրատա աշըլաճագ օլան Պալգան սէրկիսինտէ տախիլ իյֆա իտէճէք տիր:

— Վէլիահտ Բրէնս Պօրիսէ մախսուս պիր սէրայ եաբըլմագ իշիւն Սօպրանիյէ 500,000 ֆր. թախսիս իթմիշ իտի, իշպու սէրայ Թրնօվա շէհրինտէ եաբըլաճագ վէ ինշաաթ եագընտա պաշլայաճագ տըր:

— Պուլկար օրտուսընըն սիւ-

վարիլէրի վէ թօքճըլարը իշիւն Րուսիայա աթլար սըբարըշ իտիլմիշ տիր Պիր ասքէրիյէ գօմիսիօնը կիտուպ պու աթլարը գապուլ իտէճէք:

— Հարպիյէ նէզարէթի պիւր գաշ զապիթլէր Ֆրանսայա եօլլատը:

— Կիւնաղիալարտա ասքէրիյէ թալիմի տէրս վէրիլէճէք տիր:

— Թունա նէհրի թաշմագտա օլուպ, Սամօլիթ սթասիօնը, կէօմրիկի վէ պազըր մաղաղալար սուտա գալմըշլար, Սիլիստրէտէ տախիլ գօրգուլիյօր:

— Շըմէնտըֆէր մէմուրլարըն տալալարընը գաթիէն հալլ ուֆասլ իթմէք իշիւն գօմիսիօնը մախսուս թալիյն օլունտը:

ՐՈՒՍԻԱ

Տուճա րէյիսի Մ. Կօլօլին Ջարըն հուգուրընա գապուլ օլընտը Ջար «Տուճանըն ֆաիտէլի թէէսիսաթ օլտըզընա գանմըշմ վէ Տուճանըն լաղլ օլընաճաղընա տայէր շայէաթ քէք էսասըզ վէ պօշ տըր» տէտի Կօլօլինին Ջար իլէ մուպահասսը 15 տագիգա սիւրտիւ պու էսնտէ եանլարընտա նազըրլարտան քիմսէ պուլընմաւը, Րէվայէթէ կէօրէ, էվլէլէրի ուսուլին մուհաֆաղասընա թարաֆտար օլան նազըրլար աղլ օլունուպ, Մ. Սթօլիքին սէրպէստիյէթ թարաֆտարլարընտան միւրէքէպ գատէթլէր իլէ պիր հէյէթի վիւքէլա թէշքիլ իտէճէք իմըշ Մ. Կօլօլինին Ջարտան գապուլի արգու իտիլէն սէմէրէի հասըլ իթմիշ տիր. պու իսէ միւթէսուպլարա (մուլեւանդ) ֆէնա թէէսիլ իթտի:

— Սէվաստաբօլտա 12 սիլահլը ատամլար ապրիլ 10տա պօրսանըն պիւրօնտան 100,000 ռուպլիլիք պիլէթլէր վէ 4000 կիւմիւշ ռուպլիլ ճէպրէն ալուպ զայպ օլտուլար:

— Օտէստա մահպուհանէ տիրէքթօրը իքի մէճհուլ շախս թաւաֆընտան գաթլ օլունտու Գաթիլլէր թաագիպ օլընմալարընտա՝ պօմպալար աթտըլար պիրի քէնտիսինի էօլտիւրտիւ վէ տիւկէրի թուլթուլտու:

ՐՈՒՍԱՆԻԱ

Հէր նէ գատար հիւքիւմէթ քէօյիլ ըսեանը գաթիէն պասթըրըլմըշ վէ էմիլիյէթ ու ասալիշ պէր քէմալ կէօսթէրիյօր իսէտէ, տահա ասքէրլէրի քէօյլէրտէն շէքմէյօր, զիրա արաղի վէ շըֆիլիկ սահիպլէրի վէ քէօյիլլէր պէյնինտէ իթիլաֆը գաթի հասըլ օլմամըշ տըր. չօքօյլար քէօյիլլէրէ միւնտալի սուրէթտէ մուգալէլէ իմզալաւագ իսթէմէյօրլար քէզա քէօյիլլէր թօրլէ էվլէրի խարապ օլտու իսէտէ՝ էվլէլէրի ուսուլտէն տահա ֆաիտէլի վէ քէնտիլէրինէ էլլէ-

րիշլի շարթլար օլմաւտըգնա մուգալէլէլէ կիրիլլէյօրլար Պու սէպէպլէ հիւքիւմէթ պիր նաղիգ վաղիյէթաէ պուլընիյօր վէ քէօյիլլէրին զըրաաթը թաթիլ իտէճէկինտէն գօրգիյօր միսիսթէրլէր չիֆիլիկ սահիպլէրինի գանտըրիյօրլարքի քէօյիլլէրէ սուհուլէթ վէրսինլէր վէ վիւքէլա աշըգտան սէօյլէտի քի՝ «քէօյլէրտէ ասայիշ հէր տալըմ գուրշոնէ» վէ կիւրլէ գուլվէթի իլէ իպգա իտիլէմէզա, Հիւքիւմէթին պու սէօղիւ չօքօյլարա պիր թէհտիտ տիր:

— Րուճմոնիատան հիճրէթ իթմէք իսթէյէն րէշպէր եահուտիլէրի Մ. Ամիրիկա հիւքիւմէթի Պալթիմօր էյալէթիլինին Մէրիլան գաղասընա տալէթ իտէյօր Օրատա տահա իշլէնմէմիշ կէնիշ արաղիլէր պուլընտըզ հալտէ րէշպէր եօգ ըմըշ պու սէպէպլէ Ամիրիկա հիւքիւմէթի եահուտիլէրէ պէօյիւք օլալլըզլար վատ իտէյօր:

ԹԻԻՐԻՄԻԱ

ՎԱՌՆԱ. Ապրիլ 14		ՋԱԽԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ			
Վալօն	100 քիւլ.	14 50/15 40	
Արապա	52-58 լիպ.	9-11 80	
ԱՐՔԱ.			
Վալօն	100 քիւլ.	13 60/14-	
Արապա	42-47 լիպ.	7-608/-20	
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լպ.	5/60.6	
»	100 քիւլ.	13-13-40	
ՋԱՎՏԱՐ արապա	52/57 լիպ.	6 20/680	
ՖԱՍՈՒԼԱՅ արապա	100 քիւլ.	14/20	
ՌԱԲԻՑԱ	100 քիւլ.	— եօգ	
Արապա	100 քիւլ.	եօգ	
ՏԱՐԸ արապա		7. 7/20	
ԲՕԼՕՁ արապա	55-60 լպ.	12. 14.	
ՄԻՍԻՐ 57-58 լպ.	առապա	7. 80/8	
»	100 քիւլ.	10. 80-11	
ՊԱԳԱԼԻՑԷ			
Վարնա քիսպասընտա պագգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն ֆրանք իլէ:			
ԳԱՀԷ		2/ 2.15	
ՇԷԲԷՐ նէմցէ		86	
ՇԷԲԷՐ քէսմէլ	սանտըզ	42 80	
ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը		44	
»	Ֆիլիպէ	45	
»	Խիլիլիզ	32	
Րիզօն	»	53.	
ԿԱՁ Սանտըզը		10 20	
ՋԷՅԹԻՆ եաղը քիւլ.		1-25/1-45	
ԳՈՒՐՈՒ Էլզիւմ		50	
Եուճուրթա	100 ատէթի	4. 60	

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն

ՇԱԲԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՏԻՄԻՐ ՄԱՐԻՆՈՎԻ

Բիէսլավօքա փողոց Հալի Ընթ. գէմ Պատու ունիմ ծանուցանել յարգոյ հայ հասարակութեան թէ Ջատիկ առթիւ պատրաստած ենք ընտիր եւ շատ համեղ ԳՈՒՐՈՒՆԱՔՆԵՐ փափկաճաշակ յաճախորդներու համար:

Անցեալ տարիներու մէջ մեր գուգունալները ճաշակող յաճախորդներ մեզ յանձնարարեցին ծանուցանել այս անգամ ալ հայ հասարակութեան որ զայ եւ գործնականապէս հաստատեն մեր ապրանքին առաւելութիւնները ու գընեբու չափաւորութիւնը:

3—2

Տ. ՄԱՐԻՆՈՎ

Издатель: Д-ръ М. Торосиянъ

печатница Д. Тодоровъ и С-же — Варна